

131 74



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Արամ Մեյմարյան  
«04» 12 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 256 - 24

Նախաձեռնող՝

«Շին-կոմֆորտ» ՍՊԸ  
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 35, բն. 33

Գործունեությունը՝

Տաթև համայնքի Տաթև բնակավայրում  
դպրոցի կառուցում  
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 256 - 24

«04» դեկտեմբեր 2024 թ.

Տաթև համայնքի Տաթև բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

Փաստաթղթերի փաթեթ՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր

Գործունեության տեսակ՝  
Գտնվելու վայրը՝

«Բ» կատեգորիա  
Սյունիքի մարզ, Տաթև համայնք,  
Տաթև բնակավայր

**Ներածական մաս.** Կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում «Շին կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է դպրոցի կառուցում Սյունիքի մարզի Տաթև համայնքի Տաթև բնակավայրում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Դպրոցի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 1,63334 հա մակերես, կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 1662 մ<sup>2</sup>: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականություն: Դպրոցի կառուցման նախագիծը կազմվել է 2024 թվականի հուլիսի 30-ին Տաթևի համայնքապետարանի կողմից տրված N 24 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

**Նկարագրական մաս.** Նոր կառուցվող դպրոցը նախատեսվում է տեղադրել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչը լսարանների գերակշիռ մասին կապահովի հարավային տեղադրվածություն: Դպրոցի տարածքն իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք, որն ունի պարզ երկրաչափական հորինվածք: Նախատեսվող դպրոցից 40-50 մ հեռավորության վրա գտնվում են բնակելի տներ: Տարածքում առկա է արձան, որը շինարարությանը չի խանգարելու և շինարարության ընթացքում պատշաճ կերպով կպահպանվի: Տարածքում ջրային ռեսուրսներ չկան: Առկա են բարդիներ և պտղատու ծառեր՝ մոտ 60 հատ, որոնք պահպանվելու են շինարարության ընթացքում: Առկա են նաև նորատունկ պտղատու ծառեր՝ խնձորենի, սալորենի, տանձենի՝ մոտ 30 հատ, որոնք տեղափոխվելու են համայնքապետարանի հետ համաձայնեցված և համապատասխան մասնագետների ազդեցությամբ:



Հարևանությամբ գտնվում են հողամասեր և այլ տարածքներ: Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները: Ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա, բացակայում են: Հիդրոտերերաբանական տեսակետից տարածքում հորատման ընթացքում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Դրանք գտնվում են հարակից ձորակների գետահունների մակարդակներում կամ դուրս են գալիս աղբյուրների ձևով:

Հողամասի ընդհանուր մակերեսը 1,63 հա է, որից կառուցապատման մակերեսը կազմում է 1662 մ<sup>2</sup>, կանաչապատման մակերեսը՝ 3855 մ<sup>2</sup>, բարեկարգման ընդհանուր մակերեսը՝ 6288 մ<sup>2</sup>, իսկ մնացած մասը հին դպրոցի տարածքն է:

Շենքն իրենից ներկայացնում է 2 իրար կցված շինություններ՝ երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենք, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճ: Նախատեսվում է ունենալ բացօթյա մարզադաշտ, վազքուղի, կանաչապատ տարածքներ: Համաձայն էսքիզային նախագծի՝ դպրոցը երկհարկանի է: Առկա է լինելու նկուղային հարկ, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպարան: Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, բուֆետ, հանդերձարաններ, սանհանգույցներ, իսկ երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց:

Դպրոցի էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 426-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ ներառելով ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը: Դպրոցի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովման նպատակով շենքի արտաքին պատերը երեսպատվելու են սրբատաշ ֆայբերգեմենտային սալիկներով, պահպանելով հրակայուն, ոչ ջրաթափանց և հողմաջրապաշտպան, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը, կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ՝ օդային միջնաշերտով, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից, շենքերի միջտարածքային ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով, լուսավորությունը կատարվելու է «լեդ» տեսակի լամպերով:

Էլեկտրասնուցման արտաքին ցանցերի միացումները նախատեսվում են «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից, որոնք ներկայումս ապահովում են գոյություն ունեցող դպրոցի էլեկտրամատակարարումը: Էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով դպրոցի հարավային կողմում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ 175 կՎտ պիկային հզորությամբ: ՖՎ վահանակները տեղադրվելու են 25-32° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը բաղկացած է լինելու 318 հատ 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային վահանակներից: ՖՎՀ-ն միացվելու է դպրոցի գոյություն ունեցող հողանցման ցանցին:

Ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրագծից Դպրոցի համար նախատեսվում է տեղադրել 3,30 x 4,0մ չափերով 8,0մ<sup>3</sup> ջր



արտադրողականությամբ կենսաբանական մաքրման կայան՝ Topas 50: Topas 50-ը իրենից ներկայացնում է միաձույլ ինքնակառավարվող սարք՝ պատրաստված ամուր պլաստիկից: Նախատեսվում է մաքրման կայանը տեղադրել նախապես պատրաստված փոսում՝ ըստ տեղադրման սխեմայի: Տեղադրումն իրականացվելու է 100 մմ հաստությամբ ավազի շերտի վրա: Հնարավոր է նաև տեղադրել ստորերկրյա ջրերի մակարդակից ցածր՝ առանց բետոն լցնելու:

Շինարարության փուլում շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղաթիթեղով և տեղադրվելու է 3-5,0 մ լայնությամբ դարպաս: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակով, կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ: Շինարարական աշխատանքների տևողությունը կազմելու է 640 օր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, մեքենաների անիվների վրացման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների համար: Կենցաղային և խմելու նպատակներով նախատեսված ջուրը բերվելու է գործող դպրոցի ջրագծից, որը պատկանում է համայնքին և գտնվում է նոր կառուցվող դպրոցից մոտ 30 մ հեռավորության վրա: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքները հոգալու նպատակով տեղադրվելու է բիզնես-բարան՝ լվացարանով, որի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների արդյունքում օդային ավազանի և ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար նախատեսվել են անհրաժեշտ միջոցառումներ: Շինարարության ընթացքում շինարարական հրապարակը ցանկապատվելու է, շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվացվելու են հատուկ հարթակների վրա, ավազ, ցեմենտ, գաջ, խիճ, այլ սորուն նյութեր, հողային զանգվածներ, շինարարական աղբ տեղափոխող տրանսպորտային միջոցները ծածկվելու են փոշու համար անթափանց ծածկոցներով, օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար իրականացվելու է շինհրապարակի ջրցան՝ բացառելով կեղտաջրերի արտահոսքը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Շինարարական նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորվելու են փակ տարածքներում կամ ծածկվելու են անթափանց թաղանթներով, շինարարական աղբը տեղափոխվելու է դրա համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, իրականացվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում բետոնաշաղախային հասցույցներից՝ մասնագիտացված բետոնատար ավտոմեքենաներով:



Շինարարության փուլում աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով բոլոր շահագործվող մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով, աշխատանքներն իրականացվելու են ցերեկային ժամերին, պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը: Իրականացվող բնապահպանական միջոցառումների արդյունքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շահագործման փուլում դպրոցի շենքի օդափոխության և ջեռուցման համակարգը հազեցված է լինելու ժամանակակից անաղմուկ սարքավորումներով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով բացառվելու է շինանյութերի տեղադրումը հողային ծածկույթի վրա, ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Բուսահողի պահպանությունն իրականացվելու է Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, շինաշխատանքների ավարտից հետո այն օգտագործվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար: Աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է շինարարական աղբից և իրականացվելու են բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատումն իրականացվելու է Տաթևի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ տարածքի բարեկարգման և արդիականացման նախագծի համաձայն և Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ տարածքի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Կանաչապատման նպատակով տնկվելու է 76 հատ նոր ծառ, որից Կովկասյան եղևնի՝ 36 հատ, գիհի՝ 13 հատ, տույա՝ 27 հատ, սամշիտ՝ 270 գժմ:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ և գրունտի մնացորդ) տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված համապատասխան վայրեր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին (հրդեհ, բնական աղետներ, անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ) արագ արձագանքելու նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսվել են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ՝ փոշու և օդի այլ աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում դրական ջերմաստիճանի դեպքում՝ օրական 2 անգամ,
3. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
4. շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակի մշտադիտարկումներ,



5. կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ կանաչապատ տարածքների հետագա խնամքի ապահովման նպատակով:

**Պատճառաբանական մաս.** Փորձաքննության գործընթացում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ազդակիր համայնքում (Տաթև բնակավայր) անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում բնակիչները կողմ են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ նշելով դպրոցի կառուցման կարևորությունն իրենց համար: Շինարարության փուլում բացվելու է մոտ 45 աշխատատեղ և առաջնահերթությունը տրվելու է համայնքի բնակիչներին:

Նախաձեռնողը պարտավորվել է նաև շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող բացասական ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող լրացուցիչ միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով հողի բերրի շերտի հետ կապված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակելիս:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Նոր դպրոցի կառուցումը հնարավորություն կտա աշակերտների ուսուցումը կազմակերպել ավելի որակյալ, անվտանգ՝ բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, ժամանակակից չափորոշիչներով հագեցած շենքում:

Դպրոցի կառուցումն իրականացվելու է Կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակում:

### **Փորձաքննական պահանջներ**

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինաղբի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն),



2. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Տաթևի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ և խնամքով և ապահովել նախագծման թույլտվությունում և հաշվետվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը, խուսափել կենսունակ ծառերի հատումներ իրականացնելուց, անհրաժեշտության դեպքում ապահովել դրանց տեղափոխումը,

3. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները հարակից տարածքներում),

4. ապահովել աղմուկի և թրթռումների մակարդակի վերահսկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

5. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բոլոր բնապահպանական միջոցառումների իրականացումը (օդի որակ, հողային և ջրային ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ և այլն):

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Շին կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Տաթև բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝



Լեւոն Մելիքյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան